

ՊՐՈՖ. ԴՈԿՏ. Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՏԱՐԵԹՎԵՐԻ ԵՎ ԱՄՍԱԹՎԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Տարեթվերի և ամսաթվերի գործածությունը ինչպես մյուս ժողովուրդների, այնպես էլ մեզ մոտ այնքան էլ խոր հնություն չունի։ Ժամանակի չափման նախնական հասկացողությունը մարդկանց մոտ առաջանում է այն ժամանակ, երբ նախնադարյան մարդը թեակոխում է իր զարգացման համեմատաբար դիտակցական շրջանը— երբ հիմք է դնում իր տնտեսությանը և զբաղվում անասնապահությամբ և հողագործությամբ։ Հայտնի է, որ նախնադարյան թափառաշրջիկ և կիսավայրենի մարդը դեռ ոչ մի պատկերացում չի ունեցել ո՛չ ժամանակի և ո՛չ էլ նրա չափումների մասին։

Իր պատմության արշալույսն ապրող նախամարդու մոտ ժամանակի առաջին չափանիշը ցերեկն ու գիշերն է հանդիսացել—իրար հաջորդող աշխատանքային ցերեկը և հանգըստի գիշերը նախամարդու առաջին ժամանակացույցն է եղել։

Զարգացման փոքր ինչ ավելի բարձր շրջանում մարդիկ ժամանակն սկսում են չափել ըստ լուսնի փուլերի. տեսնելով լուսնի նորելու և կլորելու հաջորդական երևույթը, լուսինն են վերցնում հիմք և նրա վրա են կառուցում ժամանակի իրենց չափումները։ Ենթադրություններ կան, որ լուսնական ամիսները երբեմն գործ են ածվել տարեթվերի նշանակությամբ։ Կարծում են, օրինակ, որ Աստվածաշնչում հիշված որոշ նահապետների տարեթվերը հաշվված են ըստ լուսնական ամիսների[1]։ Այսպես օրինակ, Աստվածաշնչում եղած տեղեկության համաձայն Սեթն ապրել է 912 տարի[2]։ Եթե ընդունենք, որ այս տարեթիվն հիմնված է լուսնական ամիսների վրա, ապա նա ապրած կլինի ո՛չ թե 912 տարի, այլ 73։ Նույնը կարելի է ասել նաև Ենոքի, Մաղաղիելի և Աստվածաշնչում հիշված մի քանի այլ նահապետների և մարգարեների մասին։ Ընդհանրապես, սխալ է դատություն ունեցող ա՛յն կարծիքը, որ իբր հնում մարդիկ ավելի երկար են ապրել. այդ սխալը առաջացել է տոմարական սխալ հաշվումների հետևանքով։

Ժամանակի ընթացքում լուսնական այս «տարի»-ները մարդիկ սկսում են կապել տարվա եղանակների հետ՝ տարեմուտ ընդունելով գարնանամուտը և թվարկելով տարվա լուսիններն ըստ հաջորդականության։ Այս մասին հետաքրքիր տեղեկություն ունի 7-րդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացին։ «Անուանք ամսոցն ո՛չ էին յիսկզբանէ,— գրում է նա,— այլ սկսեալ յԱդամայ մինչև ի Մովսէս՝ դգարնանամուտն տարեմուտ անուանէին ամենայն ազգ։ Եւ ամսոց անուանք ոչ գոյր, բայց միայն զառաջին լուսինն գգարնան առաջին լուսին անուանէին և զկնի՝ երկրորդ լուսին, և երրորդ լուսին, և չորրորդ՝ մինչև ցերկոտասաներորդն, և զողջոյն ամն այսպիսի անուամբ վարէին մինչև ի մուտն գարնանայինն»[3]։

Լուսնական տասներկու ամիսների վրա ստեղծված տարին արեգակնային աստղաբաշխական ճիշտ տարուց պակաս էր մոտ 11

1. Գրոֆ. Լ. Սեմյոնով, Ամանոր հա՛ և էջմիածին։ ամսագիր, 1953 թ., № 1, էջ 26։

2. Ծնունդք, Ե, 6—8։

3. Անանիա Շիրակացի. Տիեզերագիտություն և տոմար. Երևան, 1940 թ., էջ 76։

օրով (լուսնական տարին ունի 354 օր, 8 ժամ, 48 րոպե, 34 վայրկյան տևողություն, իսկ արեգակնային տարին՝ 365 օր, 5 ժամ, 4 րոպե և 46 վայրկյան տևողություն)[4]։

Արեգակնային և լուսնային տարիների այս տարբերությունը առաջին անգամ նկատել են եգիպտական աստղաբաշխները, որոնք խնդիր ունեին նախապես պարզելու նեղոս գետի վարարման ժամանակը՝ կապված Սիրիուս փայլուն աստղի առավոտյան լուսաբացին երկնակամարում երևալու հետ, որը տեղի է ունենում ամառնամուտին։ Նրանք են առաջին անգամ գործադրել արեգակնային կոչվող տոմարը։ (Եգիպտական տոմարով տարին ուներ 13 ամիս, որոնցից 12-ը 30-ական օրից, իսկ 13-րդը՝ 5)։

Տոմարական տարվա գաղափարն առաջանալուց հետո, բնական է, պիտի առաջանար, և առաջանում է նրա սիստեմատիկ հաշվումների անհրաժեշտությունը— տարեհաշվումների ժամանակագրությունը։ Հասկանալի է, որ առանց հաստատուն թվերի ու թվականների չէր կարելի ո՛չ ժամանակը չափել և ո՛չ էլ անցյալի իրադարձությունները վերհիշել։ Արդարացի է պատմահայր Մովսես Խորենացու դիտողությունը, թե՝ «Ո՛չ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեանց»[5]։

Անհրաժեշտ է սակայն նկատել, որ հին հայկական աղբյուրներում տարեհաշվումները սկսում են ո՛չ միալար թվականի ձևով, այլ ըստ ժամանակի աչքի ընկնող քաղաքական անձնավորությունների՝ թագավորների, կայսրների և կաթողիկոսների գահակալության տարիների։

Դժբախտաբար, մեզ հասած հին հայկական աղբյուրները, իրականում, այնքան էլ հին չեն— նրանք պատկանում են հետքրիստոնեական շրջանին։ Առաջին հարցը, որ հայկական տոմարի կապակցությամբ մեր առջև ծառանում է, այդ այն է, թե ունեցե՞լ են արդյոք հայերը հեթանոսական շրջանի իրենց թվականը, թե ոչ, և եթե ունեցել են, ապա ինչպիսին է եղել այն։

1. ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՀԱՅԱԴԻՐ ԹՎԱԿԱՆ

Սկզբնաղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրությունը մեզ բերում է այն եզրակացության, որ հայերը հեթանոսական շրջանում, անվիճելի, ունեցել են ինչպես տոմար, այնպես և արեգակնային տարվա վրա հիմնված թվական։ Դժբախտաբար այդ տոմարի և թվականի մասին մանրամասն տեղեկությունները պակասում են. Քրիստոնեությունը Հայաստանում կործանեց ո՛չ միայն հեթանոսական մեհյանները, այլև հին հայկական հեթանոսական ողջ մշակույթը, այդ թվում՝ նաև տոմարական ստեղծագործությունները։

Միջնադարյան հայ տոմարագետների մոտ սակայն երբեմն պատահում ենք որոշ ակնարկների հին հայկական այդ տոմարի մասին։ Այսպես օրինակ, Հովհաննես Գառնեցին հայտնում է, որ Հովհաննես Իմաստասերը 1084 թվին տոմարական իր բարեփոխությունների ժամանակ առաջնորդվել է հին հայկական տոմարով և աշխատել է վերականգնել այն. Հովհաննես Իմաստասերը, ասում է նա, «զտոմարն երևեցոյց զհին Հայինս»[6]։

Ըստ Մովսես Խորենացու տեղեկության, հեթանոսական հայկական հին տոմարը, ինչպես և մյուս դիտությունները, մինչև Արտաշես թագավորը (գահակալել է Հայաստանում 189—160 (?) թ. մ. թ. ա.) անուշադրության է մատնված եղել, և նա է, որ կարգավորել է այն և զարգացրել։ Հայերը, ըստ Խորենացու, մինչև Արտաշես թագավորը «...մեծամեծ արուեստից և ի գիտութեանց ունայնացեալք էին, որպէս հինից և ասպատակաց պարապեալք, և այսպիսի գիտութեանց կամ անփոյթ արարեալք, և կամ ոչ հասեալք՝ զշարաթուց ասեմ, և զամսոց և զտարեաց բոլորմանց... Եւ այս ամենայն յորինի յաւուրս Արտաշիսի»[7]։

Տոմարագետներից ոմանց հաշիվներով, հեթանոսական հայկական թվականության սկիզբը կապված է եղել «Հայկյանս կոչվող համաստեղության հելիոտիկ ծագման հետ և սկիզբ է առել 2494-ին մեր թվականությունից առաջ, ուրեմն՝ դեռևս մեր երկրի նախաբնիկների շրջանում։ Պրոֆ. Լ. Սեմյոնովն անդրադառնալով հին հայկական թվականության սկզբնավորությանը, գրում է. «Երկնակամարի ամենագեղեցիկ համաստեղությունը, որը շատ ուրիշ ազգերի կողմից անվանվում է Օրիոնի համաստեղություն, նվիրված էր հայ առասպելական նախահայր և հերոս Հայկին և այդ համաստեղությունը կոչվում էր «Հայկն։ Այդ համաստեղությունը շատ մոտ էր գտնվում Մեծ Շան համաստեղությանը, որի գլխավոր աստղը Սիրիուսը կամ Սոթիսն է։ Եվ եթե առաջին հազարամյակում

4. В. А. Росовская. Календарная дальвеков. Москва, 1936 г., стр. 16—17.

5. Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. Տփղիս. 1913 թ., էջ 224։

6. Հմմտ. Ղ. Ալիշան. Հայկայ շրջան— Հին հայոց տոմար և թուական հայագիր (տե՛ս «Ծնունդ Հայրենեաց Հայոց». Վենետիկ. 1868 թ., Հատ. Ա. էջ 103)։

7. Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. էջ 175։

մեր թվականությունից առաջ Սոքիսի հելիոսային ժամացույցը սեղի էր ունենում հուլիսի 19-ին, ապա նույնը Հայկի համաստեղության համար սեղի էր ունենում օգոստոսի 11-ին»։

Ավանդաբար, հին հայկական այդ թվականի հետ են կապում Հայկի՝ Բելին ոպանելու և սնունդ խանելու առասպելը։

Հին հայկական այդ թվականը նմանության մոտիկ եզրեր է ունեցել եգիպտականի հետ։ Նա ունեցել է 365 որ և բաղկացած է եղել դարձյալ 13 ամսից, 12-ը 30-ական օրով և 13-րդը՝ 5։

365 օրից բաղկացած հայկական տոմարական տարին հավասար չէր դառնում արևելյան տոմարական հշված տարվա հետ, որովհետև աստղաբաշխական տարվա տևողությունը, մոտավորապես, 365 և մեկ քառորդ օր է, իսկ հին հայկական տոմարական տարին, քառորդ որը հայվի չառնելու հետևանքով, յուրաքանչյուր տարին մեկ օրով առաջ էր ընկնում։ Հաշվված է, որ 1460 տարվա ընթացքում հավաքված օրերը, կամ ինչպես ասում են՝ ապոկատաստատի շրջանը, մի ամբողջ տարի էր կազմում, որը և թվահաշվից դուրս էին նետում։ Այսպիսով, հին հայկական տոմարի մեջ, ինչպես եգիպտականում, նահանջ օրերը վերացնում էին ոչ թե 1 տարին մեկ անգամ նահանջ տարի հայտարարելով և փետրվարը 28-ի փոխարեն 29 օր հաշվելով, ինչպես այժմ են վարվում, այլ թողնում էին, որ այդ նահանջ օրերը կուտակվեն, դառնան մի ամբողջ տարի և ապա այդ ավելամուտ տարին դուրս էին հանում թվահաշվից։

Հայկական 13 ամսից 12-ը, այսինքն այն ամիսները, որոնք 30-ական օրից են բաղկացած, իրենց յուրաքանչյուր օրվա համար ունեցել են հատուկ անուններ։ Այդ անունները, բարեբախտաբար, հասել են մեզ։ Դրանք հետևյալներն են.

1 Արեգ
2 Հրանգ (հրախառն հող ?)
3 Առամ
4 Մարգար (Sylvanus ?)
5 Անեռանմ
6 Մաղոնդ կամ Մագրեղ
7 Աստղիկ
8 Միհր
9 Զոպաբեր (խոզաբեր ?)
10 Մուրգ (հաղրանակ ?)
11 Երեզգեան կամ Երեզկան
12 Անի
13 Գարխաս
14 Վանատ (Վանատուր ?)
15 Արամազդ
16 Մանի (ծաղումն ?)
17 Ասակ (աեսկիդրն ?)
18 Մասիս
19 Անահիտ
20 Արագած
21 Դրզոռ (Դրզուռ)
22 Կորդի կամ Կորգոիմ
23 Ծմակ
24 Լուսնակ
25 Տրօն (սիթիռ ?)
26 Նպատ
27 Վահագն
28 Սլին (լեառն)
29 Վարսագ
30 Թիշերավար[9]

Ուշադրության արժանի է, որ թվարկված անունների մեծ մասը հեթանոսական հայկական աստվածների անուններից են փոխառված։

Հին հայկական տոմարով օրն ունեցել է 24 ժամ՝ 12-ը գիշերային, 12-ը դիշերային։ Ըստ որում, օրն սկսել է ոչ թե յուսաբացին, այլ երեկոյան արևը մայր մտնելիս։ Օրվա ժամերն ունեցել են իրենց անունները, որոնք հետևյալներն են.

Գիշերային ժամեր

1 Լուսարակն
2 Աղջամուղջն
3 Մրացեալն
4 Շաղաւոտն
5 Կամաւոտն
6 Ռաւականն
7 Հարափեալն
8 Դիզակն
9 Լուսաճեմն
10 Առաւօտն
11 Լուսափայլն
12 Գայլածուն

Երեկոյին ժամեր

13 Այգն
14 Մայգն
15 Զօրագեալն
16 Հառագայթեալն
17 Շառաւիղեալն
18 Երկրատեսն
19 Շաճեալն
20 Հրակաթն
21 Հուրափեալն
22 Թաղանթեալն
23 Առավարն
24 Արփողն[10]

8. Գրոդ. Լ. Սեմյոնով, Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին (տե՛ս «Հայկական ՍՍՌ Մատենադարանի Գիտական նյութերի ժողովածու», հատ. 1-ին. 1941 թ., էջ 22—23)։

9. «Հայկական աշխարհ» օրագիր. 1968 թ., էջ 261։

10. Ա. Աբրահամյան, Եղիշացու մատենագրությունը. Երևան. 1944 թ., էջ 113։

Հին Հայաստանում, հավանական է, չէին ասում ժամը այսինչին, այլ տալիս էին տրվյալ ժամի անունը։

Պարզված է, որ հին հայկական թվականը սկսելով 2494 թվին (մ. թ. ա.), 1460 տարիների իր առաջին շրջանը բոլորել է 1034-ին (մ. թ. ա.), ուր և մի նահանջ տարի դուրս է նետվել։ 1460 տարվա երկրորդ շրջանը վերջացել է 428-ին (մ. թ.) և դարձյալ նահանջ մեկ տարին դուրս է նետվել և երրորդ շրջանը վերջացել է 1888-ին[11]։

Հին հայկական թվականի ամանորը հաստատված է եղել օգոստոսի 11-ի օրը, որը հետագայում վերահաստատեց Հովհաննես Իմաստասերը։ Ամանորի այդ օրը հեթանոս հայերի մոտ բերքի տոն էր համարվում և ուներ համազգային բնույթ. ամանորի օրը ցուր էին ցանում իրար վրա, աղավնիներ էին թռցնում, ուխտի էին գնում կենտրոնական մեհյանը՝ Բագավան և այլն։

Ենթադրություններ կան, որ նախնական շրջանում հայկական ամանորը կարող է եղած լինել նաև գարնանամտին, քանի որ նավասարդը գարնանը սկսելով, քաղաց ամիսն ընկնում է հուլիսին, որն իրապես քաղի ամիսն է[12]։

Հարց է առաջանում՝ հին հայկական այդ տոմարը ինչքա՞ն ժամանակ է գործածության մեջ մնացել և քրիստոնեությունը Հայաստան մուտք գործելուց հետո արդյոք նա էլ վերջացա՞վ։ Մեր կարծիքով հին հայկական տոմարը ժողովրդի մեջ պահվեց երկար ժամանակ— մինչև ուշ միջնադար։ Անհիմն է Հովհաննես Իմաստասերի այն վկայությունը, որ իբր թե հին հայկական տոմարը վերացվել է մեր թվականության 122-ին։ «Հաւասարապէս,— գրում է նա,— ի ՌԻԲ ամ Քրիստոսի աւարտաւ թուականն Հայկայ»[13]։

Վերջին գարերում հեթանոսական հայադիր այս թվականը, «բուն» թվականի անվան տակ, գործ է ածվում օրացույցներում։

Այս տարի, այսինքն 1956-ին, հին հայկական այս թվականով միչև օգոստոսի 11-ը 4448, իսկ օգոստոսի 11-ից հետո՝ 4449 թվականն է։

2. ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾ ԹՎԱԿԱՆ

Հայկական տեղական թվականներից մեզ հասած հայ մատենագրության մեջ ամենից գործածականը «մեծ» կոչվող թվականն է եղել։ Այս թվականը հիշվում է տարբեր անուններով՝ «բուսականութիւն հայոց», «բուսականութիւն Հայկազնեայց տոհմին», «թիւ Ասմանազեան», «բուսականութիւն հայոց տումարիս, որ Ցարեքեան կոչի», «բուսարերութիւն Աւամեան» և այլն։ Հայկական այդ թվականը հիշվում է նաև «խոսրովային», «խոսրովային պարսից մեծ թիւ» անուններով՝ նկատի ունենալով, անշուշտ, հայկական թվականի սկզբնավորության տարիներին պարսից Խոսրով Անուշիրվան թագավորի գահակալությունը (531—579 թ. թ.)։

Հայկական մեծ թվականի սկզբնավորությունը, որ կապված չէ հասարակական-քաղաքական բնույթ ունեցող ո՛չ մի իրադարձության հետ, ինչպես մենք ցույց ենք տվել մեր Շիրակացու մատենագրության մեջ, կապված է եղել 532 տարիների տոմարական առաջին շրջանի հետ[14]։ Հայկական «մեծ» թվականի սկզբնավորության մասին պարզ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ ենք համարում փոքր ինչ կանգ առնել այս շրջանի վրա՝ կապված իհարկե հայկական թվականի հետ։

Քրիստոնեությունը Հայաստանում մուտք գործելուց և պաշտոնական կրոն ճանաչվելուց հետո, սահմանվում են մի շարք տոներ՝ կապված որոշ օրերի հետ[15]։ Վաղ քրիստոնեական շրջանում Հայաստանում և քրիստոնեական մյուս երկրներում օգտագործում են 19-ամյա շրջանի համար կազմված տոնացույցներ։ Հետագայում այդ աղյուսակներին փոխարինում են 95-ամյա շրջանի աղյուսակով, իսկ 354 թվից սկսում են օգտագործել Անդրեաս Բյուզանդացու կազմած 200-ամյա շրջանի տոնական աղյուսակը։

Անդրեասի այս աղյուսակը, որ սկսել էր 354-ին, վերջացավ 553 թվին, որի պատճառով տոները սկսեցին շփոթվել։ «...Ի ժամանակս ամբարիշտ Թագաւորին Յուստինիանոսի,— գրում է Հակոբ Ղրիմեցին,— եղն

11. Ղ. Ալիշան, Հայկայ շրջան— Հին հայոց տոմար և թուական հայադիր (տե՛ս «Ցուցիչք», հատ. Ա, էջ 76—104)։

12. Հայկական ՍՍՌ Գիտական մատենադարանի № 1999 ձեռագիրը պարունակում է հին հայկական տոմարական մի ցանկ, ուր նավասարդը զուգակցված է մարտ ամսին, իսկ մյուս ամիսները՝ ըստ այդ հաջորդականության (տե՛ս թ. 26ա)։

13. Հմմտ. Ղ. Ալիշան, Հայկայ շրջան (տե՛ս «Ցուցիչք», հատ. Ա. էջ 96)։

14. Ա. Աբրահամյան, Անանիա Ծիրակացու մատենագրությունը, էջ 109։

15. Այս մասին արժեքավոր ուսումնասիրություն ունի Հ. Ն. Ակինյանը՝ «Հայոց եկեղեցական տարին յԹՆ-դորդ դարու սկիզբը» խորագրով, որ տպագրվել է «Հանդէս» ամսօրեայ»-ի 1947 թվի համարներում։

Հայտնի տոմարագետ Հակոբ Ներսիսեան
(Հայկական ՍՍՌ Պետ. մատենադարանի ձեռագրերից)

լրումն Մ. ամից կարդացն Անգրլասայ, և սկսան շփոթիլ լրմունք գատկաց և դիրք արուեստական տոմարացն[16]։

Տոմարական այս շփոթութիւնը սակայն միայն հայերի մոտ չէր, այլ ողջ բրիստոնեական աշխարհի։ Այս խառնաշփոթությունը կարգավորելու համար 561 թվին Աղեքսանդրիայում հրավիրվում է տոմարագետների մի ժողով՝ էաս Աղեքսանդրացու գլխավորությամբ։ Անանիա Շիրակունին իր «Ճատկի» ճառում մանրամասն հիշում է ինչպես ժողովի գումարման շարժառիթների, այնպես և կատարած աշխատանքների մասին և տալիս ժողովի մասնակիցների անունները[17]։

Աղեքսանդրիայի այս ժողովի մասնակիցները կազմում են 532 տարիների տոնական մի աղյուսակ՝ բաղկացած արեգակի 28 և լուսնի 19 շրջանների բազմապատիկից։ Այդ աղյուսակը հայ մատենագրության մեջ կոչվում է ՇԷՐ, կամ ավելի կրճատ՝ հինգ-

հարյուրյակ։ ՇԷՐ այս աղյուսակն ընդունելի բրիստոնյա բոլոր երկրները, այդ թվում և Հայաստանը։ Միայն Կոստանդնուպոլսում է, որ այս աղյուսակի մեջ որոշ փոփոխություն մացրեց Իրան անունով մեկը, որը և տեղից տվեց հետագայում գաղանաբանական անհամ վեճերի։

Հայկական «մեծ» թվականը ահա սկիզբ է առնում այս աղյուսակներից, որի առաջին տարին սկսում էր 553 թվականին։ Այս մասին բազմաթիվ վկայություններ կան, որոնք ավելորդ ենք համարում մեջ բերել։

7-րդ դարում Անաստաս կաթողիկոսի (661—667 թ. թ.) հանձնարարությամբ, հավանական է 665 թվականին, Շիրակացին կազմում է հայկական անշարժ տոմարը[18], որը սակայն մեզ անհայտ պատճառներով չի հասանավում և գրչածությունների մեջ չի գրվում[19]։

Այն մասին, որ իրոք հայկական թվականը սկսել է 553 թվին, վկայում են միջնադարյան մեր բոլոր ականավոր մատենագիրները՝ Հովհաննես Կոգեռնը, Հովհաննես Իմաստասերը, Ստեփանոս Ասողիկը, Ստեփանոս Օրբելյանը, Կիրակոս Գանձակեցին, Մխիթար Այրիվանեցին և մյուսները։ Ըստ այսմ, հայկական թվականի տարբերությունը մեր ներկա էրայի համեմատությամբ լինում է ոչ թե 551, ինչպես ընդունված է և թաղաքդությունն ունի հայագիտական գրականության մեջ, այլ 552, իսկ 1317 թվականից հետո, ինչպես կտեսնենք, պիտի ավելացնել 553։ Այս տեսանկյունով պիտի վերանայվի հայ ժողովրդի պատմության 8—14-րդ դարերի ամբողջ ժամանակագրությունը։

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 977 ձեռագիրը, որ բովանդակությամբ «Մայր Մաշտոց» է, գրված է «Հոռոմ թուականութեան ՌԽՁ-ին» և «Հայոց տոմարիս ՅԽԹ-ին»։ Հոռոմական 646 թվականը հավասար է՝ 646+248=894-ի։ Հայկականի համապատասխան թվականը գտնելու համար պիտի ավելացնել ոչ թե 551, այլ 552 թիվ՝ 342+552=894-ի։

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 1366 ձեռագիրը, որ բովանդակությամբ Ակիլբերանի ժողովածուն է, գրված է

16. E. Dulaurier. Recherches sur la chronologie arménienne. Paris, 1859. p. 85.

17. Ա. Աբրահամյան. Շիրակացու մատենագրությունը. էջ 295—296։

18. Հովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս. 1912 թ., էջ 32։

19. Մատենագրության մեջ հիշվող Շիրակացու անշարժ տոմարը. մեր կարծիքով, մեր հրատարակած ՇԷՐ տոմարական աղյուսակն է (տե՛ս Շիրակացու մատենագրությունը. էջ 263—241)։

20. Դարձգին կաթողիկոս Հովսեփյան. Հիշատակարան ձեռագրաց. Անթիլիաս. 1951 թ., էջ 55—59։

«Յամի վեցհազարերորդի առաջնորդի արարածոց աշխարհի, և՛ի հաղարերորդի, եւթանասներորդի, եւթներորդի կենարարին մերոյ գալստեանն, և ըստ Խոսրովային Թուոյ Հայկազանցս՝ հինգ հարիւրորդի, քսաներորդի, հինգերորդի...»[21]։ Արարչության թվականը հրեից կոչվող թվահաշվով է, ուստի դուրս պիտի հանենք 5424՝ 6501 − 5424 = 1077, որը և համապատասխանում է բնագրում հիշված քրիստոնեական թվականին։ Արարչության ու քրիստոնեական տրված թվահաշվով հայկական այս թվին պիտի ավելացնել ոչ թե 551, այլ 552 (525 + 552 = 1077)։

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 492 ձեռագիրը, որ բովանդակությամբ Մխիթար Գոշի Գատաստանագիրքն է, գրված է «ի թուականութեանս Հայոց ՌԼԳ, և շրջանին երթայոյ ի բաց ՃԼ. որ կոչի փոքր, իսկ հոռոմին ՆԵ...»[22]։ Հռոմեական 405 թվականը հավասար է՝ 405 + 248 + 532 = 1185-ի։ Հայկական փոքր կամ մտրուկ թվականի 101-ը հավասար է՝ 101 + 1084 = 1185-ի։ Այդ հաշվով հայկական թվականի վրա պիտի ավելացնել 552 (633 + 552 = 1085)։

Ստեփանոս Ասողիկը իր պատմությունը վերջացնելու տարեթիվը տվել է հետևյալ թվահաշվով. «...քննեալ գտաք ի հանդիպման ամին յԱդամայ մինչև առ մեզ լինել ամք ՅՄԶՌ. և ի խաչելութենէ կենարար շարչարանաց Տեառն՝ ամք ՋՀՌ։ Իսկ ըստ Ցունաց թուականին ի Փիլիպպոս կայսերէ՝ ամք ՉՄԷ, և ըստ հայերէն չափոյ թուականիս մերոյ՝ ամք ՆՄԳ, որ է ամ երեսներորդ թագաւորութեանն Վասիլի կայսեր Յունաց...»[23]։ Արարչության թվականն այստեղ օգտագործված է Մովսես Սյունեցու թվահաշվով, ուստի տրված թվից պիտի հանենք 5277 թիվը[24]՝ 6282 − 5277 = 1005։ Ասողիկն այստեղ հունաց թվական ասելով հասկանում է հռոմեական թվականը, ուստի 757-ին պիտի գումարենք 248, հավասար կլինի 1005-ի։ Խաչելության տրված 972-ին պիտի գումարենք 33 թիվ (Հիսուսը, ըստ ավանդության, խաչվեց

Աստղագետ իմաստասեր
(1788 թվի Մադրասի «Էֆիմերիս»-ից)

33 տարեկան հասակում)՝ 972 + 33 = 1005։ Այդ բոլոր թվահաշիվներով, ուրեմն, տրված հայկական թվին պիտի գումարենք 552՝ 453 + 552 = 1005։ Ի դեպ, 1005-ին է համապատասխանում Վասիլի կայսրության երեսներորդ տարին — նա գահակալել է 976 թվին[25]։

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 6362 ձեռագիրն ընդօրինակված է «ի Քրիստոսի խաչելութենէն մինչև ՈԼ թուական ամք ՌՄՁԹ»[26]։ Հայկական 630-ին պիտի գումարենք 33 (խաչելության թվականը) = 663։ Նույնը և մեր թվականին՝ 1182-ին (1182 + 33 = 1215)։ Եթե մենք 1215-ից հանենք 633, տարբերությունը կլինի 552։

Կարելի է բերել այլ օրինակներ ևս, բայց բերած օրինակներից պարզ երևում է, որ 11—13-րդ դարերի հայկական թվականները հաշվելիս պիտի գումարել ոչ թե 551, այլ 552։

21. Նույն տեղում, էջ 255։

22. Նույն տեղում, էջ 505։

23. Ստեփանոսի Տարոնեցոյ Ասողկան. Պատմութիւն տիեզերական, ՍՊԲ, 1885 թ., էջ 285։

24. Մ. Չամչյան. Պատմութիւն Հայոց. Գ հատոր. Վենետիկ, 1780 թ. (տե՛ս Հավելված ժամանակագրության 3-րդ էջը։

25. Gardthausen. Griechische Paleographie. Leipzig, 1913, p. 400.

26. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 6362, թ. 64։

(Շարունակելի)